դէպքի, որով շնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան։ Թ. 385.

— Կամիլաւկայի յանուն Եղիշէ քահանայի Թարխանեան Շուշի քաղաքի։ Թ. 387.

Քահանայք այսօրինակ պարգեւատրեալ են ըստ առաջարկութեան Գեր. Տ. Արիստակէս Արքեպիսկոպոսի, ս. Առաջնորդի թեմին Հայոց Աստրախանի. Տ. Գարէգին Արքեպիսկոպոսի՝ ս. Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի. Տ. Անանիա Արքեպիսկոպոսի. ս. Առաջնորդի վիճակին Հայոց Շամախւոյ, Տ. Յուսիկ եպիսկոպոսի Փոխ թեմակալի վիճակին Հայոց Երեւանայ և Տ. Աշոտ եպիսկոպոսի, Առաջնորդի թեմին Հայոց Արցախայ։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մարտի 20-ին Սինոդը լսելով զեկուցումն. Ամեն անգամ երբ Սինոդ դիմեն վանքապատկան գիւղերի բնակիչներից իրանց տունը կամ այգին ուրիշին շահեկանութեան տալու խնդրագրով, վանական Կառավարութեան միջոցով յայտարարել ի լուր հասարակութեան թէ արդեօք այդ տունը կամ այգին մի ուրիշի չի վաճառել տէրը, և յայտարարութեան օրից 15 օր անցնելուց յետոյ, եթէ շահագրգռուած անձն չյայտնուի ընթացք տալ խնդրին։

Այս կարգադրութիւնը արել է Սինոդն այն պատճառով, որ երբեմն գիւղացիներից ոմանք իրանց տունը կամ այգին վաճառում են մի քանի անձանց և խաբէութեամբ դրամներ են շորթում, սխալանքի մէջ գցելով և Սինոդին։

Նոյն օրը լսելով Վաղարշապատցի Առաքէլ Ստեփանեանի խնդիրը, որով խնդրում էր իր շահեկանութեան համար վկայական տալ Նոյեմզար Վարդանեանցի անունով, որից այգու արժէքը լիովին ստացել է, մեռել, որովհետեւ յիշեալ Առաքէլ Ստեփանեանը առաջուց նոյն այգին վա-

ճառել էր Հայկ Պռոշեանցին և ստացել այդու արժէքի մի մասը և այժմ էլ կամենում է վաճառել ուրիշին։

Նոյն օրը լսելով Երևանի Տ. Նահանգապետի թուղթը, որով խնդրում էր շուտով ներկայացնել ցուցակ այն անձանց և հաստատութիւնների մասին, որոնք իրաւունք ունեն Պետական դումայի ընտրութիւններին մասնակցել, որոշեց յիշեալ գրութեան պատճէնները ուղարկել վիճակային Կոնսիստորիաներին, պատուիրելով կազմել հարկ եղած ցուցակները և յայտարարութեամբ դիմել Վեհափառ Հայրապետին նշանակել ս. Էջմիածնի կողմից մի լիազօր ընտրող։

Մարտի 21-ին լսելով գիւղատնտես Կ. Մ. Շահնազարեանի յայտարարութիւնը Վաղարշապատի հողերը ոռոգելու մասին, որոշեց իր կողմից ներկայացուցիչ կարգել Տ. Բարգէն վարդապետին, որ նա խորհրդակցութեամբ վանական Կառավարութեան, գիւղատնտէսի և մասնագէտ պ. Մալխասեանի նախահաշիւ կազմեն Շահ-արխ կոչուած առուն կանոնաւորելու ծախքի մասին։

Մարտի 22-ին զեկուցումն լսելով որոշեց Էջմիածնապատկան «Գետարգել» կոչուած հողի կապալառու Յակոբ Ա.յդինեանի պայմանը խախտուած համարել, վերջինս անճշտապահութեան պատճառով, հողերը աճուրդով տալ ուրիշի կապալով և Ա.յդինեանցի դէմ դատ բանալ նրա վրայ հաշուած ապառիկները ստանալու համար։

Նոյն օրը կարգեց վանքապատկան Օշական գիւղի հարկաժողով ս. Էջմիածնի միաբան Խորէն վարդապետ Լազարեանին։

Մայիսի 24-ին որոշեց աչքի առաջ ունենալով Խորվիրապի ներկայ դրութիւնը, որ մինչև հունձը չի կարող վանահօրը պահել պատուիրել Երևանայ Կոնսիստորիային յիշեալ վանքի վանահօրը փոխարինաբար տալ մի հարիւր ռուբլի։

Նոյն օրը լսելով զեկուցումն վանքապատկան պանդոկի կրպակների և այգու դրութեան մասին, որոնք Գանձակումն են գտնվում, որոշեց յանձնարարել Տփխիսի թեմական առաջնորդին նախ՝ խորհրդակցել Գանձակեցի գիտակ անձանց հետ, թէ շահաւէտ է վանքապատկան պանդոկի վաճառումն և երկրորդ՝ յայտնել թէ կալուածները կառավարութիւնից յետ ստանալու ժամանակ յիշեալ կալուածների ցնաների և աւերումների մասին արձանագրութիւն կազմած է և եթէ կայ այդպիսի արձանագրութիւն ուղարկել Սինոդ, եզրակացութեան հետ միասին։

Նոյն օրը լսելով վանքապատկան Մաստարա գիւղի բնակիչների խնդիրը հողաբաժանութեան մասին, որոշեց հրամայել Խաչիկ վարդապետին գնալ Մաստարա գիւղը և առ տեղեաւն ծանօթանալ խնդրի հետ և զեկուցանել Սինոդին։

Մարտի 27-ին լսելով Վեհափառ Հայրապետի կոնդակը և նրան կից Կովկասի Փոխարքայի օգնականի գրութիւնը, որով վերջինս խնդրում է Վեհափառ Հայրապետից Նոր Բայազիտի գաւառում բանջարաբուծութեան և պարտիզպանութեան արհեստը տարածելու համար Ելենովկայում Սևանայ վանքին պատկանած կտոր հողը (1/2 դեսիատինա) թողնել Պետական կալուածոց Դեպարտամենտի տեսչութեան տակ տարեկան յատուկ վճարով. իբրև փորձնական բանջարանոց և պարտէզ, հրամայեց. նախ՝ պատուիրել Սևանայ վանքի վանահօրը տալ վարձու յիշեալ հողը ձեռնտու պայմանով առ նուազն 6 տարի ժամանակով, երկրորդ տեղեկացնել Կովկասի Փոխարքայի Օգնականին արած կարգադրութեան մասին, յայտնելով իր համակրութիւնը օգտակար ձեռնարկութեան համար։

Նոյն օրը լսելով Աստրախանի նահանգապետի գրութիւնը, որով յայտնում է որ իր կողմից արգելք չկայ Աստրախանցի Դաւիթ Բախրեանցի հոգևոր կոչման մէջ ընդունուելու առթիւ, հրամայեց թոյլ տալ Բախրեանցին

մտնել Հոգևոր կոչման մէջ Աստրախանի և Աստուածածին աւագ եկեղեցում սպասաւորելու։

Բախրեանցն աւարտել է Ներսիսեան դպրոցը։

Մարտի 28-ին լսելով երդուեալ հաւատարմատար Սոկրատ Մելիք-Ադամեանի խնդիրը, որով նա յայտնելով իր ծանր հիւանդութիւնը և թուելով իր արած ծառայութիւնները խնդրում է նպաստ, որոշեց տալ միանուագ նպաստ 1200 ռուբլի։

Մարտի 29-ին որոշեց Տփխիսում գտնուած «Դաշտի Խաչ» կոչուած կալուածը վերանորոգել ըստ նախահաշուի Թեմական ճարտարապետի պ. Գրիգորեանցի, վերանորոգութիւնը կապալով տալով աճրդախօսութեամբ։

Նոյն օրը լսելով Վեհափառ Հայրապետի Կոնդակը որով պատուիրում է Մ. Աթոռի արդիւնքից յատկացնել Կովկասի հայ արկածեալների օգտին 25000 ռուբլի և գումարը դնել Տփխիսու Նպաստամատոյց յանձնաժողովի տրամադրութեան տակ վնասուած գիւղերի համար գլխաւորապէս երկրագործական գործիքներ գնելու համար, պատուիրեց գանձապահին հետզհետէ ուղարկել այդ գումարը յիշեալ յանձնաժողովին։

Ապրիլի 6-ին լսելով Թէոդոսիա քաղաքի Հերթեցեան քահանայի գործը, ըստ խնդրանաց Թեմակալ առաջնորդի և ժողովրդեան որոշեց Սինոդի անդամներից մէկին ուղարկել քննիչ, ընտրութիւնը թողնելով Վեհափառ Հայրապետին։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց նշանակել քննիչ Տ. Բաբգէն վարդապետին։

Ապրիլ 10-ին կարճեց Պետրոս Մանդինեանի և Կեկել Պեպանեանի ամուսնալուծական գործը առաջնի մահուան պատճառով։

Ապրիլ 12-ին լսելով Բիչնեի վանքապատկան կալուածի կապալառու Իսահակ Բէյթելի խնդիրը, որով նա խնդրում է ի նկատի ունենալով Բիչնեում տեղի ունեցած արհա-

ւիրքներն, որից վնասուել է ինքը. նպաստ տալ իրան փոխարինաբար 100,000 ռուբլի և կապալավարձի մի մասը յետաձգել, որոշեց մերժել խնդիրը և պահանջել նրանից կապալավարձն ըստ պայմանի։

Նոյն օրն յայտնելով Տփխիսի Կոնսիստորիայի միջնորդութիւնը, թոյլ տուեց Զըկկինանց ս. Կարապետ եկեղեցու ծխատէր Սիմէօն քահ. Աբրահամեանցին գնալ արտասահման աչաց բժշկութեան համար։

Ապրիլի 14-ին լսելով Կ. Մ.-Ճաշնադարեանի զեկուցումն և խորհրդակցութեամբ կազմած նախահաշիւը Ճահարխ կոչուած առուի վերանորոգութեան մասին, որոշեց յանձնել վանական Կառավարութեան շուտով սկսել աշխատանքները և հրաւիրել Վաղարշապատի հասարակութեան ներկայացուցիչներին օգնել առուի փորելու գործին։

Ապրիլի 17-ին լսելով Երևանայ վիճ. Կոնսիստորիայի յայտարարութիւնը, որով խնդրում է Շարուրի գործակալութեան վնասուած հայ գիւղերի եկեղեցական մատեանների և Արատադների ապառիկներն անպահանջ թողնել, որոշեց Շարուրի կողոպտուած և վնասուած եկեղեցիների և քահանաների վրայ հաշուած բոլոր ապառիկներն ու ներկայ 1906 թուի մատեանների արժէքն ու Արաբատադները անպահանջ թողնել։